Բ. ՏԱՐԻ ՆԻՒ ԵՈՐՔ ԱՊՐԻԼ 15 1892 Թիւ 8

ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ ԱԶԳԱՅԻՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԱՄՍՕՑ 1ԻՆ ԵՒ 15ԻՆ

Տէր և Խմբագիր — Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ Editor — M. S. GABRIEL M. D.

202 W. 23d St., New York.

Տարեկան բաժնեգինն է ամեն երկրաց համար 2 թալէր կամ 10 ֆրանք։

Բաժանորդագրութիւնք կը հաշուին Յունվար 1 էն։

ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Entered as second-class mail matter. at P.O. New York. NY

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատկեր Մեծին Վարդանայ, — Հայկական Յեղափոխութիւնք, — Խրիմեան Հայրիկ մեծ Եկեղեցական և մեծ Ազգասէր, — Հանդէս Զրոյ. Տարեդարձի Հայկական Միութեան, — Վարդանայ Ատենախօսութիւնն. — Նամակ Կ. Պոլսէն. — Քաղաքական, Ազգային և Զանազան լուրեր։

ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆՔ

Ա

Ի՞ՆՉ Է ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Անցեալն դէմ ապագայն կը մարտնչի և աւանդութեան դէմ յառաջդիմութիւնն։ Նորն հնոյն տեղն գրաւելու համար կը սիրպուի բռնի մղել զայն ի բաց։ Յառաջդիմութիւնն օրէնք է, պայքարն ալ անոր պայմանն։

Մարդկային ամեն ցեղ մի և նոյն չափով ընդունակ չէ զարգացման, և մի և նոյն ցեղին պատկանող ազգերն ալ մի և նոյն շրջափոխական գործօններու ազդեցութիւնն չեն կրեր, զուգաքայլ չեն յառաջդիմեր, ուստի և մին միւսին գերազանց և գերիշխան կը հանդիսանայ։

Ցեղ ցեղի և ազգ ազգի վերայ իւր գերազանցութիւն ընդհանրապէս պատերազմու կը հաստատէ, և յաղթութիւնն երկար դարերու կամ տարիներու մէջ կատարուած ներքին յառաջդիմութիւնն յանկարծ ի վեր հանող գործողութիւն մ'է։

Մի և նոյն ազգին բոլոր անդամներն ալ միշտ նոյն արագութեամբ յառաջ չեն երթար. կը պատահի որ դաս մի յարեալ մնայ հնոյն և զեղծեալին մինչ ուրիշ դաս մի նոր ոգւով և գաղափարներով տոգորուի։ Յայնժամ երկու կուսակցութիւններ երևան կուգան, և յառաջդիմականն կը սիրպուի պահպանողականին դէմ ելնել—բռնի տապալել զառամեալ կամ ապականեալ հաստատութիւններն և իրաց նոր կարգ մի հաստատել իւր յառաջադէմ գաղափարաց համեմատ։ Այսպէս բռնի և ի հեճուկս դիմադիր կուսակցութեան՝ իրաց արտաքին վիճակն ներքին յառաջդիմութեան հետ ի ներդաշնակութիւն բերելն է ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ։

Բ

ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆՔ ԱՆՑԵԼՈՅՆ

Հայաստանն ալ ունեցած է յեղափոխութիւններ մեծ և փոքր։

Նախապատմական յեղափոխութիւն մի ընդունելի է այն հեռաւոր անցելոյն մէջ երբ ներկայէս 27 կամ 28 դար առաջ մեր արիացեղ նախահարք Հայաստանի ոչ—արիական ցեղերու հետ խառնուելով իբրև յեղափոխութեան մի հրովն ի մի ձուլեցին ամենն, և արդիւնքն եղաւ արիական տարերց գերակշռութիւնն մեր ազգին մէջ։

Յեղափոխութեան ահագին բայց անյաջող փորձ մ'ալ հինգերորդ դարուն մէջ Վասակեան կուսակցութեան ձեռքով եղաւ, որ կ'ուզէր օգնութեամբ Պարսից հաստատել ի Հայաստան կրակապաշտութիւն կամ մազդէզութիւն փոխանակ քրիստոնէութեան։ Վարդանեան կուսակցութիւնն, թէև մեծամեծ նեղութեամբք, պահպանեց քրիստոնէական կարգերն անխախտ՝ ի դերեւ հանելով պարոկասէր կուսակցութեան ճգունքն։ Վասակեանք թուով և ուժով գերակշիռ էին բայց իրենց դաւաբն չկրցաւ շահիլ, ինչպէս գրեթէ միշտ կը պատահի երբ յեղափոխութիւն յարուցանողներն ոչ թէ յառաջայլ ետ տանիլ կ'ուզեն երկրին հաստատութիւններն։

Ազգային ժամանակակից պատմութեան մէջ կը գտնենք յեղափոխութիւն մի ոչ մեծ՝ զոր Կ. Պոլսոյ Հայք գործեցին՝ դնելով ազնուապետական իշխանութեան փոխան հանրապետականն։ Ամիրայ, սեղանաւոր, մեծատուն և բարձրաստիճան եկեղեցական կը կազմէին ազնուապետական կուսակցութիւնն ընդդէմ ժողովրդային։ Բ. Դուռն բնականապէս մտիկ կ'անէր ազնուապետական պատուաւոր կուսակցութեան։ Ժողովրդական կուսակցութեան պարագլուխներէն ոմանք աքսորուեցան և աւելի բազումք բանտարկուեցան։ Ժողովուրդն ոգի ի բռին մաքառեցաւ և հազարներով խըռնուելով բարձրագոչ պահանջեց Բ. Դռնէն արձակել բանտարկեալներն։ Այս աներկիւղ և կրքոտ շարժանց վերջնական անդիւնքն նպաստաւոր եղաւ ազատականաց, և այն վարչական փոփոխութիւնն զոր ժողովրդական կուսակցութիւնն ձեռք բերաւ 1841ին, յետոյ եղաւ «Ազգային Սահմանադրութիւն։»

Գ

ՆՈՐ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ՄԻ

Այժմ մեր ազգին մէջ 1841 ի յեղափոխութենէն տարբեր չափեր և կարեւորութիւն ունեցող յեղափոխութեան մի վերայ կը խօսուի։ Այդ յեղափոխութեան ոմանք կը սպասեն յուսով, ոմանք երկիւղով և ոչ սակաւք ալ հեգնական ժպիտով։

Տեսնենք թէ ինչո՞ւ այդպիսի յեղափոխութեան վերայ կը խօսուի։ Արդեօք Տաճկահայոց արդէն իրագործեալ ներքին յառաջդիմութեան և արտաքին պայմանաց միջև ահագին անհամաձայնութիւն յառաջ եկած է։

Ի՞նչ նոր վիճակ, նոր խնդիր, նոր բան կայ ծանրակշիռ։ Կողոպտող Քրդերն, տուրք հաւաքող ցեղապետներն, կաշառակեր կառավարիչք, մահմետականին և քրիստոնէին անհաւասարութիւնն հին բաներ են։

Նոր բան Թուրք կառավարութեան հայատեաց քաղաքականութիւնն է։ Առաջ Թուրքն զՀայ կը հարստահարէր իբրև մահմետական զքրիստոնեայ. այժմ կառավարութիւնն ինքնին կը հարստահարէ զՀայն իբրեւ Թուրք զՀայ։ Առաջ կրօնական էր շարժառիթն և նիւթական կեղեքումն էր նպատակն. այժմ ատոր վերայ աւելցած է ցեղային և քաղաքական շարժառիթն ալ, և նպատակն է սակարացուցանել հայութիւնն։

Ուրեմն հարստահարութեանց շրջանն ընդարձակած է և շարժառիթն կնճռոտած, բարդուած։

Միւս կողմէն՝ հարստահարելոց խորհելու, զգալու և կրելու կերպերն մեծապէս փոխուած են։ Հայերն յանցելումն Տաճկաց նեղութիւններն իրենց «ծովանման մեղաց» համար ապաշխարանք կը համարէին։ Հարկաւ Տաճիկն պիտի յոխորտար Հայուն, վասն զի տաճիկ էր։ Կառավարութեան բռնապետութիւնն ալ ոչ ուրեք դայրոյթ կամ զարմանք կը պատճառէր։

Այդ անցեալն քաջ իսկ անցեալ է արդէն։ Այժմու Հայերն, մանաւանդ նորաբոյս սերունդք պարտուց և իրաւանց աւելի լուսաւոր գիտակցութիւն ունին։ Նոքա Բ. Դրան տուրք կը վճարեն և հպատակի ամեն պարտքըն լիովին կը կատարեն. բայց զարմանօք կը տեսնեն թէ Բ. Դուռն իւր պարտք չկատարեր. դիրենք դէշ կը կառավարէ. զիրենք բարբարոս ցեղերու դէմ ոչ կը պաշտպանէ և ոչ ալ թոյլ կուտայ որ անձնապաշտպան լինին։ Անհնարին ցաւով և արդար բարկութեամբ կը տեսնեն թէ իրենք կը սերմանեն և Քրդեր կը հնձեն. իրենք ոչխար կը բուծանեն, բարբարոսք կ'ուտեն. իրենք ձի կը մեծցունեն, լեռնցիներ կը հեծնեն. իրենք ապրանք կը գնեն, գողեր զայնս կը վաճառեն։ Այս կարգի չչափելի անիրաւութեանց դէմ Հայոց ցաւն ու դանգատն ընդհանուր է։

Կայ փոքրամասնութիւն մ՚ալ աւելի զարգացած՝ որ բարոյական հարստահարութիւններէ եւ սոսկալի կերպով կ՚ազդուի. վանքերու, ընկերութեանց, դպրոցաց, մամլոյ և գրոց դէմ յարուցուած արգելքներն, պատուոյ դէմ գործուած ոճիրներն, արժանապատուութեան վիրաւորիչ և բնաւորութեան եղծիչ եղող բռնաւորութիւնն անտանելի բաներ են այս կարգի Հայերու համար :

Ուրեմն մէկ կողմէն հարստահարութիւնք սաստկացած և ընդարձակուած են, միւս կողմէն հարստահարութիւններն անմռունչ կրելու հին տրամադրութիւնն չէ մնացած : Կառավարիչ և կառավարեալ տարրներու միջեւ անդունդ բացուած է : Կառավարութեան եղանակն կառավարելոց զգացմանց և համոզմանց հետ բացարձակ, անտանելի, բարբարոս աններդաշնակութեան մէջ է :

Հարկ է Հայկական դաւառաց վարչութիւնն համաձայնեցունել Հայոց յառաջադէմ գաղափարներուն և մշակեալ զգացմանց. և ահա այդ հարկն է որ մտածել կուտայ թէ յեղափոխութիւն մի տեղի պիտի ունենայ :

Դ

ՀԱՅՈՑ ԽԱՂԱՂԱՍԻՐՈՒԹԻՒՆՆ

Հայերն խաղաղական միջոցներով միայն իրենց բարեկարգական դատ շահիլ աշխատած են. նոքա ուղղակի Բ. Դրան դիմած են այն գիտակցութիւն ունենալով թէ ինչ որ կը խնդրեն է օսմ. ճշմարիտ շահուց նպաստաւոր : Երբ հարկ եղաւ Եւրոպայի անդէն միջնորդութեան դիմել, դարձեալ օսմ. դիւանագիտաց աչքին առջեւ գործեցին :

Մինչեւ իսկ այսօր ալ արտասահմանի հայրենասիրական յանձնախումբք հրապարակային գործունէութեամբ կը նկրտին փաստն յառաջ տանիլ. նոցա զէնքն է գրիչն :

Դժբաղդաբար Սուլթանն Հայոց այս բաց և անկեղծ ընթացքին ներքեւ ծածուկ խորհուրդներ պահուած կարծեց իւր չարամիտ խորհրդատուներու քսութեամբ : Կայսրն որ Տաճկաց մէջ այնքան խաբեբաներ ու այնքան կեղծաւորութիւն տեսած լինելով կասկածոտ եղած է, չհաւատաց թէ իւր քրիստոնեայ հպատակներ անկեղծութեամբ կը խօսին և իրօք կը բաղձան իւր վեհապետութեան ներքեւ մնալ :

Շատ հաւանական է նաեւ թէ Սուլթան Համիտ Հայոց պատմութիւնն ուսումնասիրած և նոցա ազգային բնաւորութիւնն իմաստասիրած չէ : Իմաստասէր պատմագէտներուն ծանօթ են Հայուն եփուն տրամադրութիւններն, գիտեն նոքա թէ Հայն իբրեւ ցեղ, յագեցած է արեամբ, ձանձրացած է պատերազմներէ, և կը սիրէ իւր հող և իւր միտք մշակելով զբաղիլ :

Հայ ազգին մեծախոհ առաջնորդներուն փառասիրութիւնն է արդարեւ քաղաքակիրթ աշխարհի ներկայացունել օրինակն այն ժողովրդեան որ բարոյական զօրութեամբ կը յաղթէ նիւթական ուժի, որ անոյշ միջոցներով կը յաղթանակէ բռնութեան, և որ, ինչպէս կ՚ասէ Գրիգոր Արծրունի, կ՚ուզէ «մի նոր քաղաքական սկզբունք աւետել մարդկութեան, այն է, որ կարելի է հասնիլ ազատութեան՝ քաղաքակրթական խաղաղ պատերազմով, առանց ապստամբվելու, առանց զէնք վերցնելու :»

Այս ոգւով գործեցին Խրիմեան և Ներսէս : Մեծ ոգիներ միշտ հաւատացած են գաղափարի և բանի զօրութեան : Հայոց Հայրիկն, իբրեւ պատրիարք, Բ. Դրան առջեւ դրաւ ազգին ցաւերն երկու ընդարձակ տեղեկագրովք, և ջանաց բանիւ ածել զնա ի հաւանութիւն և ստանալ ցաւոց դարմանն : Ներսէս Եւրոպայի անդէն, խաղաղական միջնորդութիւնն ձեռք բերաւ 61դ յօդուածի մէջ մարմնացած : Ներսէսի քարտուղարն ալ ցայսօր տխուր անուշութեամբ կը շարունակէ նոյն պետութեանց յիշեցունել իրենց խոստումն և ստորագրութիւն :

Ե

ԹԷ Ի՛ՆՉՊԷՍ ՀԱՅԵՐ ԿԸ ՍՏԻՊՈՒԻՆ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԼԻՆԵԼՈՒ

Հայեր ճշմարիտ խաղաղասիրական ոգւով այնքան անոյշ միջոցներ յարատեւութեամբ փորձած և յարդ արդիւնք մի տեսած չլինելով, ընդհակառակն Սուլթանի դառն կասկածներուն և Դրան յորանճուն խոստութեանց ենթարկուած տեսնելով զիրենք, զարմանալի՞ է եթէ սկսած են տխրութեամբ մածել թէ գուցէ գրչի և խօսքի ազնիւ պայքարն չքաւէ, և հարկ լինի յակամայից դիմել բուռն միջոցներու :

Այո՛, տխուր բայց ճշմարիտ իրողութիւն մ՚է թէ քան զամենայն զգօնամիտ Հայերն անզգամ սկսած են միտիլ դէպ ի յեղափոխականութիւն :

Հայոց խաղաղասիրութիւնն տկարութեան ընծայուած է, ուստի և ոմանք ստիպուած են հաշակել թէ Հայերն զէնք գործածելու ալ գերազանցապէս ընդունակ են :

Այլք ստիպուեցան ընդունիլ թէ Տաճկահայն ինք զինք զէնքով պաշտպանելու իրաւունք ունի : «Եթէ, ասաց Արծրունի, Թուրքիայի Հայը մի ձեռքով մուրճ, տապոր կամ բահ բռնելով, միւս ձեռքով հրացան կը բռնի, —այդ գուցէ կը լինի միակ միջոց Թուրքաց տիրապետութեան տակ ճնշված Հայոց ազգի համար պաշտպանել և պահպանել իր ազգային գոյութիւնը :»

Մինաս Չերազ, անմահ Ներսէսի կենդանի քարտուղարն ստիպուեցաւ ասել թէ, եթէ Հայ Հայրենասիրական Միութիւնք «յաջողին մեծ ճգնաժամու պահուն գրաւել ինչ ինչ ռազմագիտական դիրքեր օսմանեան Հայաստանի մէջ, Հայք պիտի կարենան իրենց պայմաններն բռնի ընդունիլ տալ Դրան, և իրեանց պահանջմանց յարգանօք մտիկ պիտի ընեն լիազօրներն :» (Տես Լ՚Առմէնի, թ. 34 1891)

Ազգին մէջ շատ աւելի տարածուած է յեղափոխական համոզումն քան արտաքուստ կ՚երեւի : Սա երկիւղի կամ առ խոհեմութեան կը լռեն շատք, կամ կը խօսին մեծ զգուշութեամբ, բայց և անոնք անգամ որ կը յայտարարեն լինի ոչ-յեղափոխական, կը խօսին ի նպաստ յեղափոխութեան : Եթէ այսպիսեաց խօսքերէն թափանցիկ քօղն վերկացունես, պարզամիտք իսկ պիտի տեսնեն յեղափոխական իմաստներն :

Համոզման այս նշանակելի փոփոխութեան հետ կայ նաեւ տրամադրութեանց աւելի նշանաւոր փոփոխութիւն : Գաղափարով չէ միայն, այլ և զգացմամբ յեղափոխական սկսած է լինիլ Հայն :

Այս նոր տրամադրութեան տկար, սկզբնական ցոյցերն բաւ մաւին ծանօթ են աշխարհի, այլ վստահ և զէք թէ ի դաւառս և ի մայրաքաղաքին անհամար երեւոյթներ տեղի կ՚ունենան ցուցիչ յեղափոխական միտմանց :

Այո՛, ստոյգ, աներկբայելի նշաններ կան թէ Հայ ազգն յղի է յեղափոխութեամբ մի :

Նոյնպէս ստոյգ է թէ յեղափոխութեան պատասխանատուութիւնն բոլորովին Սուլթան Համիտ կայսեր վերայ պիտի ծանրանայ եթէ տեղի ունենայ :

Վերջապէս ստոյգ է թէ աշխարհի վերայ չնչող այն անձնաւորութիւնն որ կարող է այդ յեղափոխութիւն արգելուլ, է Սուլթան Ապտ Իւլ Համէտ Բ., —դի նորին վեհափառութեան ձեռքն է Հայաստանն ինքնօրէն նահանգի վերածել ի յաւերժական երախտագիտու հայ ազգին և ի մեծ փառս Իւր :

Բայց որովհետեւ չենք կրնար մեր բոլոր յոյս հայրենասիրական այդպիսի վեհանձնութեան մի վերայ դնելով նիրհել, պարտիմք քննել այն խնդիր թէ ինչպիսի յեղափոխութիւն պիտի լինի Հայոց գալու յեղափոխութիւնն և որպէս պարտէ պատրաստել զայն : Զայդ պիտի քննեմք յաջորդ թուով :

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

ՄԵԾ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՒ ՄԵԾ ԱԶԳԱՍԷՐ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐԵԱԼՆ ԱԶԳԻՆ

Կաթողիկոսական թիկնածուներու բազում անուններ նետուած են հրապարակ, որոց մի քանին ճշմարիտ արժանիք կը ներկայացուցեն և այլք որոշ իմաստ չարուող հնչումներ միայն են առ այժմ։

Հայրապետի բարձր գահոյքն բազմելու և ազգն ողջոյն հովուելու պաշտօնին կոչուելու համար հարկ է որ եկեղեցականն լինի մեծ եկեղեցական։

Մեր ազգի արդի վիճակին մէջ կուսակրօն եկեղեցականն — վարդապետ լինի թէ եպիսկոպոս — կրկին պաշտօններ վարելու, այն է քարոզիչի և առաջնորդի պաշտօններն վարելու մէջ կրնայ և պարտի ցուցնել իւր բարձր արժանիք։

Մեծ է այն վարդապետ որ սրբազան պերճախօսութեան հուրն ունի, և ժողովուրդն կը շինէ, կը զօրացնէ, կը մաքրէ բարոյական ճշմարտութեանց քարոզութեամբ։ Դիւնք այդպիսի վարդապետաց անուններն ընտրելեաց ցանկին մէջ, և դիւնք այդ ցանկի գլուխն զանուն այն վարդապետի որ սրտաթափանց պերճախօսութեամբ կը խօսի ժողովրդեան — զանուն Խրիմեան Հայրիկի։

Մեծ է այն վարդապետ որ իբրև տեսուչ կամ առաջնորդ թեմի՝ եկեղեցական և ազգային գործոց ընթացքն բացառիկ իմաստութեամբ և փայլուն արդեամբք կը վարէ· կամ իբրև վանահայր՝ վանքն իւր բուն նպատակին ծառայելու վիճակին մէջ կը դնէ — զայն վառարան մի կ'անէ լուսոյ· կամ իբրև պատրիարք՝ ազգային կենսական խնդիր մի կը լուծէ կամ լաւ ուղղութեան մէջ կը դնէ։ Դիւ՛նք այդպիսի եկեղեցականաց անուանքն ընտրելեաց ցանկին մէջ, և զանուն այն եկեղեցականին որ իմաստուն առաջնորդ, անմման վանահայր և անձնուէր պատրիարք եղած է՝ դիւնք ցանկին գլուխն —զանուն Խրիմեան Հայրիկի։

Մեծ է այն վարդապետ որ բարի խրատուց և իմաստուն տեսչութեան հետ կը միացունէ անձնական վեհ և անձնուրաց գնացք, կը ներշնչէ ազգն իւր կսկ կենօք և օրինակաւ, և որոյ անուն աղբիւր կը լինի բարոյական զօրութեան։ Դիւնք այդպիսի վարդապետի անունն ընտրելեաց ցանկին գլուխն — զանունն Խրիմեան Հայրիկի։

Խրիմեան այն միակ արքեպիսկոպոսն է այժմ որ եղած է այր ամուսին, վարժապետ, վարդապետ, խմբագիր, վանահայր, պատրիարք և պատգամաւոր։ Նա ունի հօր գորովը, քերթողի աւիւնն, առաքելոյ հաւատն, քարոզչի պերճախօսութիւնն և հանրային գործիչի տոկունութիւնն։

Խրիմեան մեր ազգին մէջ բուն «ազգասիրութիւն» կոչուած զգացման առաջին մշակն եղած է, և նա եղած է առաջին վարդապետն որուն մէջ ազգային թերթերն «ազգասէր» տիտղոսն ընծայած են։

Խրիմեան եղած է միակ վանահայրն որ ի սիրտ Հայաստանի մամուլ հիմնած և թերթ հրատարակած է։

Խրիմեան եղած է առաջին պատրիարքն որ առանձին հարստահարութեանց դէպքերու վերաբերութեամբ թագրիրներ գրելն անբաւական դտնելով՝ Բ. Դրան մատուցանել սկսած է ընդարձակ և մանրամասն տեղեկագիր Հայաստանի մէջ գործուած հարստահարութեանց վերայ, և իրաց ամբողջ դրութեան բարւոքումն խնդրած է։ Նա ինքն դրած է Հայկական Խնդրոյն հիմնաքարն որոյ վերայ չինեց յետոյ Ներսէս։

Խրիմեան Հայրիկ մեծ եկեղեցական և մեծ ազգասէր մ'է։ Նա ճշմարիտ քրիստոնեայ և տիպար Հայ է։ Նա է հայրն ներկայ հայութեան, հայրն է ապրող պատրիարքաց ևս։ Նա մեր ժամանակակից պատմութեան մէջ մեծագոյն աստուածային պատգամաւորն եղած է, վերածնող և ոգեւորիչ շունչ երկնասիւք։

Խրիմեան Հայրիկ է այն մեծ հոգին որ 1500 տարի կոխոտուած, չարչարուած և նուաղեալ Հայաստանն գրկեց անսպառ և անխոնջ սիրով, փչեց ի նա ոգի 50 տարի և տուաւ նմա խլրտիլ։

Երբ նուաղեալն սթափեցաւ, երախտագէտ ոգւով և դալուկ շրթամբ կոչեց զԽրիմեան «ՀԱՅՐԻ՛Կ։»

Ազգն զնա «Հայրիկ» անուանելով արդէն ընտրած և օծած է զնա ի հայրապետութիւն ամենայն Հայոց, և ո՛վ որ կաթողիկոսական ընտրութեան ներկայ առթիւ իւր քուէն չտար ՀԱՅՐԻԿԻՆ, նա ազգին կամքն և ազգին ժամանակակից պատմութիւնն կ'անգիտանայ։

ԿԵՑՑԷ՛ ՀԱՅՐԻԿՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, և տացէ՛ մեզ երկին տեսնել զնա ընդ հուպ բազմեալ ի գահոյս հայրապետական։

ՀԱՆԴԷՍ Զ. ՏԱՐԵԴԱՐՁԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԵՆ

Հայկական Միութեան ընդարձակ ժողովասրահն Հայերու երկսեռ բազմութեամբ խռնեալ էր Ապրիլ 2ի շաբաթ երեկոյին· ոչ միայն Նիւ Եորք քաղաքէն և Պրուքլինէն այլ և Ճըրզի Սիթիէն, Փաթերսընէն, Փրինսթընէն և ուրիշ մօտակայ քաղաքներէ հայրենակիցներ եկած էին հանդիսին, այնպէս որ սրահին յարակից խուցն և անցքն լեցուած էին ուշկեկ հասնողներով։ Ամերիկաբնակ Հայն քիչ անգամ այնքան հայրենակիցներ ի մի վայր հաւաքեալ տեսնելու հաճոյքն կ'ունենայ։

Հայկական Միութիւնն, համաձայն իւր կանոնագրութեան ամեն տարի իւր տարեդարձին հետ կը տօնէ միանգամայն Վարդանանց սրբազան յիշատակն։ Քաջին Վարդանայ մեծադիր պատկերն կը կենայր ի ճակատ սրբարանին, ինչպէս նաև Մայր Հայաստանն և Հայաստանի մեծ ատլասն։

Հանդէսն բացուեցաւ բանիւք Ատենապետ Տի. Յ. Թաւշանճեանի, որ միութեան ծագումն և յառաջդիմութիւն պատմեց, և ցուցուց թէ «Հայկական Միութիւնն» իւր վեց տարուան տևողութեամբն արդէն հերքելու վերայ է այն դժբաղդ առածն թէ «Հայեր չեն միանար։»

Տր. Ա. Այվազեան, երեկոյի ատենախօսն, իւր ճառին մէջ ամփոփեց ե՛ւ Հայկական Միութեան ե՛ւ Վարդանանց նահատակութեան տարեդարձներն, երկուքին վերաբերութեամբ ևս ինչ ինչ գեղեցիկ խորհրդածութիւններ ընելով։ Ազգային եղբայրութեան ոգւոյն նուազութիւնն մեր մէջ ողբաց յարգելի ատենախօսն. եթէ, ըսաւ, ամեն մէկս զգայինք թէ Հայու ցաւն մեր ցաւն է, թէ հարստահարեալ Հայուհին մեր քոյրն է, թէ Հայուն յառաջդիմութիւնն և յաջողութիւնն մերն է, յայնժամ չպիտի լինէին այնքան անպատիժ հարստահարիչներ, և ոչ ալ այնքան անարժաններ պիտի բազմէին ազգային բարձր աթոռներու վերայ։

Օր. Տատրեան անգղիերէն կարդաց մի առոգանեց ճարտարութեամբ, որմէ կ'երևի թէ մերայինք ո՛րչափ կ'օգտին այն մասնաւոր հոգածութենէն որով ամերիկեան վարժարանաց մէջ առոգանութեան կրթութիւնն կ'աւանդուի։ Օր. Այվատեան ալ հայերէն առոգանեց աւուր պատշաճի ընտիր քերթուած մի «Հիմի՞ էլ լռենք,» և առոգանեց զայն իւր սովորական եռանդուն եղանակաւ։

Երաժշտութիւնն այս անգամ շատ տեղ կը բռնէր հանդիսին մէջ։ Տի. Ալիքսանեան նուագեց երկու ազգային եղանակներ լոքորինայով՝ որ նորօրինակ բայց ախորժելի էր։ Տեարք Շիրէֆեան և Խաչաֆեան ջութակ,

և Տի· Երկանեան սրինդ՝ նուագեցին։ Տր· Իշխանեան կիթառ դարնելով երգեց Տի· Ճինիշեանի հետ, և թէպէտ պատրաստուելու համար քիչ ժամանակ ունեցած էին սոքա, փայլուն յաջողութիւն մ'ունեցան։ Տր· Ց· Արշակունի յանկարծ հրաւիրուեցաւ երգել, և թէև յանպատրաստից՝ երգեց ի մեծ հաճոյս ամենուն։ Գեղեցիկ սեռէն երգող միայն մէկ հատ ունէինք, —Տիկին Պ· Ցակոբեան— որ երգեց սքանչելապէս «Մայր Արքա-սի»ն և ուրիշ ազգային երգ մի, և զմայլեցոյց բոլոր հանդիսականներն։

Հանդէսին վերջին մասն էր ատենախօսութիւնն զոր Տր· Գաբրիէլեան ըրաւ իբրև Վարդան Մամիկոնեան։ Ատենախօսն երևցաւ զգեցած սպարապետին զինուորական հանդերձներն, սաղաւարտ ի գլուխ և սուր ընդ մէջ, և փորձեց Մեծին Վարդանայ ազգային փորձառութեան թարգման լինիլ։

Հանդէսն, որ տեւեց մինչև կէս գիշեր, եղաւ ամենայնիւ կանոնաւոր, և նոյն իսկ պարապոյ միջոցին երբ օշարակ մատուցուեցաւ խոնեալ սրահին մէջ, չփոթութեան ստուերն անգամ չտեսնուեցաւ։

ՎԱՐԴԱՆԱՅ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ցաւիտենականին հրամանաւ կուգամ խօսիլ ձեզ, Հայեր, ես Վարդան Մամիկոնեան։

Երանի՜ թէ կարենայի երկրաւոր բանիւ ասել ձեզ զոր ինչ լեզուաւ հրեշտակաց է միայն ածել ի բարբառ, կամ թէ դուք կարէիք մահկանացու աչօք կարդալ այն հատորներ որք գրուած են ի սիրտ իմ, հատորներ ա-բրիւնագիր։

Արիւնած են այո՛ իմ սիրտ ամեն օր, և վէր ի վէր յաւելած· վէրք ո՛չ զայնս ասեմ զորս թշնամեաց նետք հասուցին զինուորիս, և տուին ինձ մեռնիլ զայն մահ, զոր կը տօնէք դուք այսօր, այլ այն վէրքեր, զորս ազգակիցք իմ տուին ինձ և կեանքս բոլոր արին անընդհատ մի նահատակութիւն։

Կարիվէր վէրք եղան ինձ այն դառն պատրանք զորս կրեցի ի տագնապս ճգնաժամուց ուր գերազանց արութեան և սիրալիր միութեան տեղ՝ գտայ ինձ դէմ դծուած նախանձ և վատութիւն։

Ցորժամ Ցազկերտ արքայ Պարսից մեր հերքողական թղթոյն համար զայրացած՝ հրամայեց որ գլխաւոր նախարարքս ի դուռն երթանք տալ պատասխան, ըսի ես ընկերներուս, գրենք նմա նամակ մի ևս բացատրական, և միանգամայն պատրաստ լինինք զինեալ ընծայել դիմադրութիւն՝ եթէ բռնանայ։ Վասակ պնդեց թէ պարտ է սիրան երթալ անձամբ ցուցանել զարքային, և այլքն այո՛ ասացին։

Ճամբայ ելանք։ «Ես» կ'ասէր Վասակ, «աւագ իշխան Հայաստանի և մարզպան, պիտի խօսիմ արքային, պիտի ցուցնեմ թէ չէ և չէ հնար Հայոցս դառնալ երբէք ի մոգութիւն։» Իւրաքանչիւր նախարար նոյնպէս կ'ուխտէր խօսիլ արձակ համարձակ։

Հասանք ի դուռն։ Ատեան կազմեցաւ· արքայից արքայն բազմած ի գահոյս, և շուրջն էին աւագանին մեծամեծ։ «Է» մռնչեց արքայն, «ի՞նչ անպատկառ, հայհոյալից նամակ գրած էք, կ'ուզեմ այժմ լսել Ձեր շըրթունքէն թէ հնազանդ պիտի լինի՞ք հրամանաց արքայական։»

Կը լռէր Վասակ։ Նախարարք բոլոր մունջ կացին։ Ո՛ վայրկենին չարագուշակ։

Ես հինգերորդ իշխան էի ըստ կարգի աւագութեան, այլ առաջին եղայ պատասխան տալու, և վերջի՛ն։ Ոտքի ելայ և խօսեցայ առ արքայ ինչ որ Հոգին Սուրբ ներշնչեց ինձ ի ժամուն։

Երբ խօսքս աւարտեցի, շուրջ նայեցայ իմ ուղեկից նախարարաց։ Ա՜հ, ո՛չ ոք կ'իշխէր բերան բանալ, ո՛չ ոք սիրտ ըրաւ խօսիլ մի բառ։ Երբ պատիւ վայելել կայ, կամին բազմիլ նախաթոռ, երբ պարգև ընդունիլ կայ, վասակք փութան մատչիլ յառաջ, երբ ներբող կարդալ պէտք է, յետինն ալ կուզէ լինիլ առաջին, իսկ երբ վըտա՜նգ կայ, երբ պէտք է հզօրն յանդիմանել, է՜, յայնժամ յետինն քան զամենայն կ'ուզեն լինիլ վատասիրտք։ Լռեցին, կարկեցան, կակամեցան, և մնացին աչք ի խոնարհ գլխիկոր։

Երկչո՛տներ, վատ Վասակ, ըսի, յորժամ դուրս ելանք, մինչև ցասպարէզ պատերազմին խիզախեցիք գոռալով, և երբ հասաք թշնամւոյն առջև, ճիկ հանել իսկ չիշխեցիք· թողուցիք զիս միայնակ։ Իսկ Վասակ զիս կը մեղադրէր, անխոհեմ զիս կը կոչէր։ Նորէն կը վիրաւորէր զիս։

Երեք օր երեք գիշեր հետս վիճեցան նախարարք։ Կ'ուզէին որ խոհեմութեամբ ամենքս ուրանայինք զհաւատ, և դառնայինք ի Հայաստան։ Զհաւանեցայ։ Միջնորդ զԱրտակ իշխանն Մոկաց, ձգեցին, զոր ջերմ սիրով կը սիրէի, այլ մնացի անդրդուելի։ Յետոյ զԱչուշա ըզբդեշխն Վրաց, ձգեցին միջնորդ, որ ևս թափեց բոլոր իւր ճիգ, այլ չկարաց զիս համոզել։ Սուրբ Գիրքն բերին վերջապէս, և ուխտեցին ջերմ երդմամբ թէ երբ Հայաստան միանգամ հասնինք միաբան պիտի վանեն զմոգսն, եթէ հաւանիմ և ես իրենց համաձայնիլ։ Ի՞նչ կ'ասէք, կը գոչէի, դուք վատութիւնն խոհեմութի՛ւն կը համարիք, չպատասխանեցիք արքային և այժմ կը սուզէք ուրանա՜լ. սխալ մեծ գործեցիք, և այժմ պատրաստ էք մեծագոյն ևս գործել սխալ· յոյս տուիք մունջ կենալով, և այժմ վստահութիւն կ'ուզէք ներշնչել նմա ուրանալով· ալ ի՜նչպէս հնար պիտի լինի յետոյ գնա յուսահատեցուցանել, և տալ դադարիլ ի հալածանաց։ Ոչ խրատ, ոչ յանդիմանութիւն, ոչ աղաչանք իմ ազդեցին ինչ նոցա· ոչ ոք համաձայնեցաւ ինձ· և ես, ո՛ դառն, դա՜ռն վայրկենին... հաւանեցայ։

Երբ հասանք ի Հայաստան, օն, ըսի, ետ ճամբենք մոգապետն և մոգաց բազմութիւն, հանդերձ բացատրական նամակաւ։ Չէ, ասաց Վասակ, խոհեմութիւն չէ այնպէս մերժել մէկէն ի մէկ։ Եւ այլ նախարարք նմա անսացին։

Խաբեցիք զիս ուրեմն, խոհե՛մ նախարարք։

Եւ յուսահատ ու տխրամած, ժողովեցի ընտանիքս և մնասբարով ասելով հէ՛ք Հայաստանի, չուեցի երթալ ի Ցոյնս։ Հասած էի գիւղն Արաման, երբ Արշաւիր, Հըմայեակ, Գազրիկ, երեք իշխանք հանդերձ երեք երիցիւք հասան ետեւէս, բերելով թուղթ Վասակէն և յայլ նախարարաց, և եւս երդման Աւետարան, որովք կ'ուխտէին իբկոյն մերժել զմոգապետն և մոգութիւն եթէ ես հաւանէի դառնալ և զօրավարել բանակին։

Ծագեցաւ յիս յուսոյ նշոյլ· վերադարձայ։ Նորէն պատրանք կրեցի։ Ո՞ւր էք ուխտաւոր նախարարք, ո՞ւր էք սուրբ որոշմամբ արիացած իշխաններ...։

Շատ ժամանակ չանցաւ, իմացայ թէ Վասակ նոր յոյս տուած է մոգապետին և թագաւորական թագի խոստում ընդունած է մոգպետէն։

Երթայր և վատթարէր այսպէս Վասակ· երկչոտ լռողն վատ երկմիտի փոխուած էր, և վատ երկմիտն վատթար կուսակից՝ հաւատոյ թշնամւոյն։

Պարտ էր ուրեմն ջախջախել Վասակայ կուսակցութիւնն մինչև էր չափազանց զօրացած· և ջախջախեցի։ Յետ կատաղի ընդհարման, բռնուեցաւ ժանտ Վասակ։

Վասակ գիտէր արտասուել· դառն արցունք թափեց իբրև զղջացած, և վարդապետք գթացին ի նա։ Վասակ ուխտ և երդում արաւ հաւատարմութեան, և իշխանք, խոհե՛մ իշխանք, ուզեցին վեհանձն ներողութեամբ շահիլ զսիրտ Վասակայ, և միացեալ տեսնել բոլոր վանդակ նախարարութիւնն ընդդէմ օտարին։

Ի զո՛ւր կ՝աղաղակէի թէ այլ ևս Վասակայ մարդպանութիւն և զօրաց գունդ հաւատալ է գործ յետին յիմարութեան. վայրապար կը բողոքէի թէ չիք շահիլ անսրտին սիրան, չիք քաղել թուզ ի տատասկէ կամ խաղող ի փշոց։ Զանազատին ինձ։

Զանազատին ինձ այն նախարարք և եպիսկոպոսունք որք յետոյ այնքան զղջացին երբ տեսան զՎասակ յանչափս զօրացած ի միաս հայրենեաց։ Զղջում տարաժա՛մ։ Որ ինչ եղած էր եղած էր։ Գործուած էին ահագին սըխալներ, կը մնայր կրել և հետևանքն ահաւոր։ Ի Հիւսիս յԱղուանս էի, կը տօնէի փոքր բանակիս մեծ յաղթութիւնն ընդդէմ թշնամեաց, երբ գուժկան հասաւ ինձ, ո՛ժամուն, ո՛չ արաղէտ գուժկանին, ո՛ դժընդակ հարուածին, թէ Վասակ, ժանան, վատն, անզգամն Վասակ յայտնապէս միացած է իւր և իւր կուսակից իշխանաց զօրաք Պարսից ահագին բանակին զոր բերել տուած է խոստմամբ վճռական հարուածն տալու եկեղեցւոյն։ Ո՛րպիսի սարսուռ ընթացաւ յոտից ցգլուխ իմ։ Դարձայ զայրագին ի Հայաստան։ գտայ թէ 60 հազար զօրաք որոց կէսն անվարժ գեղջուկներ էին կամ վանքերէն եկած միանձունք, ունէի դէմ դնել 50 հազար քաջ հայ զօրաց և 200 հազար պարսից։ Իրացած էր գուշակութիւնս։ Հայք Հայոց դէմ ճակատիլ ունէին, այր ընկերին նետ արձակել, հայր զորդի վիրաւորել, եղբայր զեղբայր խողխողել։ Ո՛ աղէտ տարօրինակ որ սոսկացոյց զերկին զերկիր, ո՛ անզգամ երկչոտութիւն, ո՛ անմի՛տ խոհեմութիւն որ մղած էր զհայրենիս աջիւ զձախս հարուածել, ո՛ դժպհի հարկին յորմէ խոյս տալ էր վատութիւն ինձ համար. պարտէր մարանչիլ, հարկ էր յանձն առնուլ զպարտութիւն մարմնաւոր, հարկ էր մեռնիլ որ Հայաստան կարէր ապրիլ, և զարկի յաջ և յահեակ կատաղութեամբ անօրինակ, զարկի որպէս երբէք չէի զարկած յընթացս քառասնամեայ զինուորութեանս, զարկի, զարկի՛, և ինքս ինկայ դիաթաւալ։

Եւ այժմ կուգամ յանուն երկնից անիծել ներկայի ժանտ Վասակներ. զայնս որք են սմն աւելի ոմն նուազ նման նմի՛ն. զայնս որք կը լռեն ուր պարտէ խօսիլ, կը շողոքորթեն ուր պարտ է բողոքել, կը համբուրեն ուր պարտ է հարուածել, և կը քակեն հայրենեաց սուրբ միութիւնն։

Կուգամ յանուն երկնից նախատել զձեզ, ո՛ հովիւք, և ո՛ հովուապետ, որք կը քծնիք դաժան գայլոց և անմիտ խոհեմութեան դաս կը կարդաք /րկչոտ հօտին. նախատել և զձեզ ո՛ անձնասէր պետք և գլուխք որ կը պատրէք զժողովուրդն և կը պառակտէք։

Կուգամ յանուն երկնից կշտամբել զձե՛զ, որք կը գթաք անգութին, զձեզ որք վատէն ծառայութիւն առ հայրենիս կը սպասէք, և որք փորձեալ կեղծաւորաց կը հաւատաք պաշտօններ։

Կուգամ յանուն երկնից յանդիմանել զձե՛զ, որք կասկածոտ խօսքերով կը թուլցունէք բազուկներն, զձե՛զ, անյոյսք և անհաւատք որք կ՝ասէք ժողովրդեան թէ չիք յոյս չիք փրկութիւն. որք չէք հաւատար թէ կարող է Աստուած որդիս Աբրահամու յարուցանել ի քարանց։

Կուգամ յանուն երկնից գովել զքեզ, խոնարհ գեղջուկ, որ քո քրտանց արդիւնքէն մաս կը հանես կարօտին, և քո երկու լումաներով կ՝օգնես ազգին սուրբ մշակաց. գովել և զքե՛զ, Հա՛յ մեծատուն, որ զքո գանձ կը նուիրես յազատութիւն հայրենեաց. և գովել զքեզ ևս, ո՛ գիտուն որ կը գրես ճշմարիտն և կը խօսիս հաւատով։

Կուգամ յանուն երկնից օրհնել զքեզ, Հայ մայր, մա՛յր, որ զաւակդ կը նուիրես հայրենեաց. օրհնել զքեզ ո՛ վեհոգի հայրենասէր որոյ վսեմ խորհուրդք բարձր քան զաշտարակ, որոյ անկեղծ սէր խորագոյն քան զխըրամ՝ ամրութիւն են Հայաստանին անպաշտպան։

Կուգամ հռչակել թշնամեաց ազգիս թէ Հայաստան չէ մեռած. և հռչակել ձեզ ո՛ Հայեր, թէ ոչ մի ազգ կարէ մեռնիլ որ կամք ունի ապրելու։

Կուգամ յանուն երկնից ասել ձեզ ամենուդ, ո՛ Հայեր, Մասիս չէ Մասիս եթէ խոնարհի, Երասխ չէ Երասխ եթէ լուռ լինի, և Հայն ալ չէ հայ որ կը մնայ գերի՛. գերի էք, Հայեր, դուք թրքաց գերի՛։ Ասեմ ձեզ, պի՛ղծ է գերութիւն յաչս երկնից, և անարգ է գերին որ իւր շղթայից հետ կը հաշտուի Փչրեցէք Հայեր ձեր գերութեան շղթաներն։

Կուգամ յանուն երկնից հրամայել ձեզ, ո՛ վարդապետք, օրհնել սուրբ սուրն անձնուէր հայ զինուորին և հրաւէր կարդալ ձեզ, հա՛յ երիտասարդք, ելնել փչրել Հայաստանի շղթաներն։ Ի պսակել ձեր սուրբ ճըգունքն երկինք չպիտի համրէ բազուկներն այլ չափէ պիտի ձեր սի՛րտ ձեր սէ՛ր ձեր հաւա՛տ։ Ելէք փչրել Հայրենեաց պիղծ շղթաներն.

Կուգամ, ո՛ Հայեր ի սիրուս աչխարհի, ընծայել ձեզ սուրս և փչել ձեզ հոգի երկնային։ Առէք սուրբ ՍՈՒՐՆ, առէք զՈԳԻՆ Վարդանայ և փչրեցէք Հայաստանի շղթաներն, օ՛ն։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

Կ. Պոլիս 28 Մարտ 1892

Բարեկամ,

Բազում խուզարկութիւնք կը կատարուին ամեն կողմ, և նորէն սարսափը կը շատնայ։ Մէկը խել մը լուսանկար ունէր, տարին ոստիկանութեան դուռը և հաշիւ ուզեցին ամեն մէկ լուսանկարին համար։ Ո՞վ է, ո՞ւսկիս կը ճանչնաս, նէճի՞ է։ Ոստիկանութեան նախարարը այսպէս նոր ճիւղ մը հաստատեց գրաքննութեան, որ պիտի կոչուի լուսանկարաքննութիւն. Նեխարարը այսպէս նոր ճիւղ մը հաստատեց գրաքննութեան, որ պիտի կոչուի լուսանկարաքննութիւն. Ներեցէք բառիս երկայնութեանը, և գուշակեցէք թէ օրերս որքան լուսանկարներու մասին պարտ ու պատչաճը գործադրուած է առ ի զգուշութիւն։ Օրինակի համար ես որ քու լուսանկարիդ համար հաշիւ տալու մեծ բաղձանք չունէի, մտածեցի այրել, ետքը ողորմելով— մեր երկիրը ամենողորմութեան երկիրը է հիմա— միայն աքսորի դատապարտեցի զայն։ կը յուսամ ինձի այս առթիւ երախտագիտական նամակ մը... չես գրեր։ Տաճկաստանը բարի և գթառատ մարդոց աչխարհ մը պիտի ընենք, և ասկէ պիտի հալածենք մոլորեցուցիչներուն պատկերն և ստահակներուն շուքն անգամ որպէս զի վտեմաշուք աւազակաց տեղը նեղ չգայ։

Արաբական ապստամբութեան վերջացած ըլլալը կրկին և կրկին հրատարակեցինք, բոլոր աչխարհ լսեց, Արաբները չեն լսեր, վասն զի օրերս ստոյգ աղբիւրէ կիմանանք թէ ապստամբներ դեռ հոս հոն Ահմէտ Ֆէհմի փաչային գնդերուն դէմ կը դնեն։

Պատրիարք Աչըգեան վերջապէս չկրցաւ Ազգ. Ժողով դումարելու արտօնութիւն ստանալ Բ. Դռնէն, և սակայն տակաւին կաթողիկոսական թիկնածու ըլլալու համարձակութիւն ունի։ Կը յուսամք թէ գաւառական պատգամաւորները Խրիմեանին պիտի տան իրենց քուէն առ հաստակ։ Ի՞նչ անմխիթար բան պիտի ըլլայ եթէ Աչըգեան կամ անոր նման եպիսկոպոս մը ընտրուի կաթողիկոս փոխանակ Հայրիկին։

Ռուսահայ և տաճկահայ իբր 60 եպիսկոպոս ունինք ներկայիս (երկուքը պատրիարք են և երկուքը կաթողիկոս) և կարելի է մէկը չկայ անոնց մէջ որ հաւատայ թէ ինքը արժանի չէ կաթողիկոս ըլլալու։

Իսկ եթէ Հայրիկ կաթողիկոս չկրնար ըլլալ, ո՞վ կարող է ըլլալ։

Եթէ Հայրիկ հայրիկ չէ, ո՞վ է ուրեմն հայրիկ։

ԱՆԵՐԵՒՈՑԹՆ

ՇՕՂ ԵՒ ՇՕՂՔ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՎԵՀ. ՇԱՀԻՆ

ՊԱՏԱՍԽԱՆՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ՈՄԱՆՑ ՈՒՂԵՐՁԻՆ

Թեհրանէն փետր. 13ին կը գրեն «Մշակ»ին թէ վերջապէս, այսինքն երեք ամիս սպասելէ յետոյ, Շահին ներկայանալու արժանացեր է Ամերիկայի Հայոց պատուիրակն: Թղթակիցն կ'ասէ թէ Թեհրանի Հայոց մէջ «հարց էր ծագել թէ ինչ հարկաւորութիւն կար մի այդ տեսակ ուղերց մատուցանել հեռաւոր մի հայ գաղթականութեան կողմից և արդեօք այդ քայլը վիրաւորիչ չէ՞ Պարսկաստանի Հայերի հպատակասիրութեան զգացմունքի համար և չէ՞ կարող կասկած յարուցանել որ պարսկահպատակ Հայերը ապերախտ են և անկարող գնահատել Վեհ. Շահի հայրական կառավարութիւնը, քանի որ Ամերիկայի Հայերն են նրանց տեղ շնորհակալութիւն յայտնում:... Եղան և ջանքեր խափանել տալու այդ ուղերձի մատուցումը և ունկնդրութիւն ստանալը:»

«Հայք»ի ընթերցողաց ծանօթ է թէ այդպիսի ուղերձի և այդպիսի պատուիրակի յղումն Ամերիկայի հայ գաղթականութեան անունով եղած է բայց փոքրամասնութեան մի տղայական ջանիւքն, որուն վրայ ծիծաղողներն նախ Ամերիկայի' և ապա Թեհրանի ողջամիտ Հայերն եղան:

Հաւաքական ցուցամոլութիւնն ալ անհատական ցուցամոլութեան պէս այպանելի է: Շահն իւր հայ հըպատակներն չնեղեր, անոնց աղէկ աչքով կը նայի, բարւո'ք. պարսկահայեր իրենց շնորհակալութիւն յայտնելու առիթներ կ'ունենան, Առաջնորդն նոցա երախտագիտութեան թարգման հանդիսանալ գիտէ: Պարսկաստանէ դուրս գտնուող Հայոց կողմանէ եւս եթէ նոյնըն հաստատելու պէտք կայ, այդ անկ է Պատրիարքին կամ աւելի ճշդիւ Ամենայն Հայոց Հայրապետին, ինչպէս որ արդարև Մակար կաթողիկոսն փառաւորապէս ըրաւ զայդ երբ Շահն այցելեց Էջմիածին:

Արտասահմանի Հայեր կամ Յանձնախմբեր կրնան այն կարգի դիւանագիտական դիմումներ անել կամ ուղերձներ տալ զորս ազգին պաշտօնական մարմիններ չեն կրնար: Բայց երբ հեռաւոր փոքրիկ գաղթականութեան մի մէկ փոքր մասն շնորհակալութեան ուղերձ և պատուիրակ կը յղէ Շահին, ի հարկէ ոմանց կասկածոտ ուշադրութիւնն, այլոց արհամարհոտ ծաղրն կը հրաւիրէ իւր վրայ իբրև անկարգապահ և տղայամիտ:

Ամենայն Հայ Գաղթականութեան զգօն մասն պիտի ընդունի սակայն թէ Հեհ. Շահն վեհանձնութեամբ հաճեր է շատ քաղաքավար պատասխան մի տալ, զորոյ բառ առ բառ թարգմանութիւն կ'արտատպեմք «Մշակէն»—

«Ամերիկայի Միացեալ-Նահանգների մէջ բնակվող Հայոց մեծապատիւ և արժանաւոր պետերին և տեարց յայտ լինի.

«Որ ձեր կողմից ուղարկուած շնորհակալութեան և երախտագիտութեան ուղերձը մեծապատիւ Մօսիօյ Յովսէփ Սարաֆեանի միջնորդութեամբ Նորին Վեհափառութեան իմ օգոստափառ թագակալ տէր և բարեբար արքայից արքայի (Տէրն բարձրեալ նրա թագաւորութիւնը և պետութիւնը յաւիտեան պահեսցէ ընդ հովանեաւ) աչաց առջև դրվեց և Նորին վեհափառութեան գոհունակութեան արժանի եղաւ: Պատգամաբերը մեծ ընդունելութիւն և շնորհ գտաւ: Ձեր այդ դունակ երախտագիտութեան զգացմանց արտայայտութիւնը յաչս և ի միտս Նորին արքայական մեծաշուք փառաւորութեան կարի յոյժ հաճոյական և դրուատանաց արժանի թուեցաւ և օգոստափառ իմ Տէրն հրամայեց ինձ ծանօթ առնել ձեզ, որ մեր երկրի մէջ բնակվող և եղող բոլոր ազգերի անդորրութիւնը, ազատութիւնը և ապահովութիւնը մշտապէս մեր ամենաջերմ իղձն եղած է և է, մանաւորապէս հայ ազգը որ ի հնուց անտի մեր պետութեան և երկրի մէջ ասպնջականութիւն և ապաւէն գտած է և մեր թագաւորների շնորհներին արժանացած և մեծ ծառայութիւններ այս մշտնջենաւոր տէրութեան մատուցած է և կը մատուցանէ, և այսուհետեւ եւս մեր կայսերական հոգածութեան և համակրանաց առարկայ պիտի լինի:

«Նորին վեհափառութիւնն ինձ հրամայեց, որ ձեր՝ մեծապատիւ պետերիդ ուղերձի պատասխանն գրելով, Նորին կայսերական մեծութեան առ հայ ազգն ունեցած շնորհաց և մարդասիրութեան յարատեւութեան մասին հաւաստիք տամ, որպէս զի միշտ շնորհապարտ՝ Ն. կ. վեհափառութեան ամենաթանգ կենաց համար աղօթարար լինիք: Տուկալի կօյ ռաճաբ 1309, ստորագրեալ է Ալի Աղսար, Ամին-Սուլթան:»

Հեռագրեր Գահիրէէն առ Հէրըլտ.— Հրովարտակին ընթերցման օրն դեռ որոշուած չէ, և ծանր անհամաձայնութիւն կը ծագի անոր նկատմամբ: Անգղիացիք կ'ասեն թէ հրովարտակին խօսքերովն Խտիւն գաւառի մի պարզ ընդհանուր կառավարիչն կը ներկայացուի, և հետեւապէս անընդունելի է: Խտիւն մեծ տաղտուկ կը զգայ, բայց կը մնայ խաղաղ: Բանակցութիւնք ժրութեամբ կը շարունակուին Կ. Պոլսոյ հետ՝ հրովարտակն եղանակաւորելու նպատակաւ: Կը զրուցեն թէ Էյուպ փաշա ճոխ ընծաներ բերած է Սուլթանէն առ Խտիւն: Իտալիա եւս ուժգնօրէն թեր կ'ելնէ Անգղիոյ որ Սուլթանի հրովարտակն չընդունուի: Լորտ Սալըզպըրիի խրատով՝ Խտիւն խնդրած է պետութիւններէն գործածել իրենց ազդեցութիւն Սուլթանն համոզելու որ Եգիպտոսի սահմանաց մէջ մացունէ Սինայի թերակղզին եւս որ Սուէզի ծոցին և Աքպարի մէջտեղ կ'իյնայ:

— Գոհութեամբ կը տեղեկանամք թէ Փարիզի Հայրենասիրաց Յանձնախումբն կը շարունակէ իւր գործունէութիւն ողբացեալ Էքնայեանի արժանաւոր յաջորդին, Մեծ. Յ. Իսկէնտէրի ատենապետութեամբ որ Կալկաթայէն վերադարձած է ի Փարիզ: Տի. Իսկէնտէր արդէն ծանօթ է իւր եռանդուն և խոհուն հայրենասիրութեամբ, և կը յուսամք թէ միութեան խնդիրն որ իւր նախորդին մեծագոյն կիրքն էր, իւր օրով և իւր գործակից հայրենասիրաց ջանիւք ուժգնօրէն պիտի մղուի յառաջ:

— «Կարս» լրագիրը հաղորդում է,» կ'ասէ Արձագանք, «որ այս տարուայ ապրիլի 14ին Ղարսում Երեւանի նահանգական դատարանի քրէական բաժինը պէտք է քննէ Պ. Պ. Սարգիս Կուկունեանցի, Սահակ Յարութիւնեանցի, Կոնստանդին Լիսինեանի և այլ քառասուն Հայերի գործը, որոնք մեղադրվում են թէ մի խումբ կազմելով, սպանութիւններ են կատարել և ընդդիմացել են իշխանութեան ներկայացուցիչներին: Այս դատը կը տեւի 10—15 օր: Նախագահելու է Պ. Բակալօ՝ Երեւանի նահանգական դատարանի նախագահը:»

Մենէ կը խնդրուի ծանուցանել հետեւեալն.— Սքէնէքթատի քաղաքէն (Օլպընիի մօտ) անկէ տարի մ'առաջ խոյս տուած է 20 տարեկան հայ երիտասարդ մի Յակոբոս անունով, որ Ամերիկացւոց մէջ Ճէյմս կը կոչուի: Իւր ծնողք անհանգիստ են և կը խնդրեն որ այդ երիտասարդին ուր լինելը գիտցողներն շնորհք ընեն «Հայք»ի խմբագրութեան ծանուցանել:

HAGOPIAN

PHOTO-ENGRAVING CO.

3 Great Jones St. New York

Engraving for all purposes of

illustration in line & half-tone.

LANTELME'S

HOTEL & RESTAURANT,

40 UNION SQUARE NEW YORK CITY

16 և 17 րդ փողոցներու միջև արևելեան կողմն ։
—Ընտիր Գաղղիական Խոհարարութիւն—
Նախաճաշ 40 և ճաշ 75 սէնթ

ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ

Թուրքիա դրամ ղրկելու համար ոչ մի տուն Ամերիկայի մէջ կրնայ տալ այնչափ դիւրութիւն և ներշնչել այնչափ վստահութիւն որչափ կուտայ Կիւլպէնկեան մեծ տունն որ ճիւղեր ունի Թուրքիոյ բոլոր կողմերն և Եւրոպիոյ նշանաւոր քաղաքաց մէջ ։ Ամերիկաբնակ Հայք որ դրամ ղրկել կ'ուզեն ի Թուրքիա կրնան ամենայն վստահութեամբ դիմել առ Տի. Կիւլլապի Ս. Կիւլպէնկեան,

53 Cedar Sq. N.Y.

ԱՒԵՏԻՍ ՆԱՀԻԿԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել թէ երկար տարիներու փորձառութեան շնորհիւ ամենէն ապահով և աժան գըներով փոխանակագիր տալ կարող է Խարբերդու և Պոլսոյ վրայ, և փարա կամ թիքէթ խրկել Մարսիլիա ։

Ունի նաև ընծայի շատ յարմար Տաճկական Չինական, Հնդկական և Ճարոնական ամեն տեսակ ապրանքներ։

Ծանօթութիւն.— Գործերնուս խաթրին համար ստիպուած չեմք մեր անունը կորսնցնել և օտար անուն մը կրել, մենք բուն Նահիկեան ենք ։ Մեզ գրել հետեւեալ հասցէիւ

A. N. Nahikian, 39 Pleasant St. Worcester, Mass.

— «ՀԱՅՔ»ի 1891 *տարին ամբողջ կապուած կը ծախուի 2 թալէր 5 սէնթի ։*

Հետեւեալ գրքերն կրնան գնուիլ, գինն կանխիկ վճարելով, «ՀԱՅՔ»ի խմբագրատունէն, 202w. 23d St.
New York

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ *Գրեաց Մ. Սմբատ Գաբրիէլեան, 1888, (նախապէս հրատարակուած «Արեւելք»ի մէջ) 61 էջ. գինն է 20 սէնթ կամ մէկ ֆրանք։*

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, *ի պէտս Ազգ. Վարժարանաց. գրեաց Մ. Ս. Գաբրիէլեան, 1891՝ 128 էջ, գին մէկ թալէր կամ հինգ ֆրանք ։ Նթէ վարժարանաց մէջ իբրեւ դասագիրք գործածելու համար ուզուին բազմաթիւ օրինակներ միանգամայն հարիւրին յիսուն զեղչ կը լինի։*

P. SHALJIAN

9 SPRUCE ST. NEW YORK

ԳԻՐՔԵՐ ԵՒ ՏԵՏՐԱԿՆԵՐ ԿԸ ԿԱԶՄԵՆՔ

ԳԻՆ ՉԱՓԱՒՈՐ

Կ Ա Զ Մ Ը Ն Տ Ի Ր

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՐԶԱՐԱՆ

(Չափաւոր օրինակներ միայն տպեալ)

Սոյն Մարզարան 128 *երեսներէ բաղկացեալ և* 36 *ձեւերով բացատրեալ, ինքնուսուցիչ գրքոյկ մ'է զինուորական մարզանաց և մարտագիտական սկզբանց ։*

Գինն որևէ հասցէի համար մէկ թալէր կամ հինգ ֆրանք ։ Վեց կամ աւելի օրինակներ գնողին, հարիւրին 25 *զեղչ կը լինի ։ Կրնայ ստացուիլ «ՀԱՅՔ»ի Խմբագրութենէն կամ ուղղակի հեղինակէն, հետևեալ հասցէով,*
G. Casbarian, Gen. P. O. Brooklyn, New York U. S. A.

MARK F. COSGROVE

ԿՕՇԻԿՆԵՐ, ՄՈՅԿԵՐ ԵՒ ՐԸՊՊԸՐՆԵՐ

78 Front St., Corn Bigelow Court
WORCESTER MASS.

Այս է ամենէն աղէկ խանութն Վուստըրի մէջ, ուր կրնաս գնել ամեն տեսակ կօշիկներ մոյկեր, և կոշիկի ըըպպըրներ ։ Հրամէ եկուր անգամ մը և տես թէ ինտոր լաւ ընդունելութիւն կուտանք մեզ այցելող Հայերուն ։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՁԱՅՆ ՄԻ ԱՐԱՐԱՏ ԼԵՌՆԷՆ, *անգղիերէն տետր մ'է* 54 *երեսներէ բաղկացեալ, որ կը պարունակէ հեղինակին - Տիար Միհրան Պաղտասարեանի - կենսագրութիւնն, Օսմանեան Պատմութեան վերայ ակնարկ մի և և Հայոց Պատմութեան բովանդակութիւն մի ։ Տետրին վերջին երեսներն նուիրեալ են Հայոց պէտքերն և բաղձանքն ցուցնելու ։*

Այս տետր կը վաճառուի 50 *սէնթի. դիմել հեղինակին հետեւեալ հասցէիւ* — Mr. M. Baghdasarian, 411 Walnut St. Des Moines Iowa, U. S. A.

Հայե՛ր

Երբ նոր գլխարկի, օձիքի կամ ո և է արական հանդերձեղենի պէտք ունենաք, գնացէք New York Hat House, 14 Front Street, Worcester, *որ Մէյն փողոցին մօտիկ է, հոն պիտի գտնէք լաւ ապրանքներ միայն, և շատ աժան ։*

PHARMACIE FRANCAISE,

NORBERT FRANCK.

311 7th AVENUE, NEW YORK.

Դեղագիրք կը պատրաստուին խնամով

BUSH & CO

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

ԴԵՂԱԳՈՐԾ

(հաստատեալ ի 1849)

56 FRONT STREET WORCESTER, MASS.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն
Մ. Ս. Գ Ա Բ Ր Ի Է Լ Ե Ա Ն